Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
մայիսի 25-ի N 811-Լ որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Նպատակը | Կատարման պատասխանատու մարմինը | Ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը և չափը | Միջոցառման արդյունքը | Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | **1. Օրենսդրության բարեփոխումներ** | | | | |
| 1) | «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունում | Չգրանցված դեղերի ներմուծման կարգավորումների սահմանում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2023 թ. 4-րդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: | Օրենքի նախագծին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Օրենսդրական փոփոխությունների արդյունքում օրենսդրական ընթացակարգերի գործնական կիրառության արդյունավետության բարելավում |
| 2) | Հարկադիր լիցենզավորման մեխանիզմների փոփոխություն. «Արտոնագրերի մասին» օրենքում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ ՀՀ օրենքի նախագծի ընդունում | Հարկադիր լիցենզավորման իրավական հիմքերի բարելավում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն | 2024 թ. 4-րդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: | Օրենքի նախագծին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Օրենսդրական փոփոխությունների արդյունքում օրենսդրական ընթացակարգերի գործնական կիրառության արդյունավետության բարելավում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **2. Համապատասխան մասնագիտական կադրերի ապահովում, դեղագործական արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացում** | | | | | | | |
| 1) | Դեղագործության ոլորտում բուհական ծրագրերի շարունակական արդիականացում, դեղագործական հմտությունների զարգացման ծրագրի մշակում և իրականացում | Բուհական ծրագրերի համապատասխա-նությունը շուկայի պահանջներին, գործնական հմտությունների զարգացում | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, «Արֆարմա» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ), մասնավոր հատված | 2024-2027 թթ. | ՀՀ պետ. բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ: Պետական ֆինանսավորում տարեկան մինչև 10 մլն ՀՀ դրամ: | Բուհ-մասնավոր հատված համագործակցու-թյան հուշագրերի կնքում, գործնական հմտությունների զարգացման ծրագրի առկայություն | Տարեկան մոտ 30 սկսնակ մասնագետի առկայություն |
| 2) | Կադրերի մասնագիտական վերապատրաստում | Որակյալ աշխատուժի առկայություն | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, «Արֆարմա» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ) | 2024-2027 թթ. | ՀՀ պետ. բյուջե և մասնավոր հատվածի համաֆինանսա-վորում, պետական ֆինանսավորում տարեկան մինչև 20 մլն ՀՀ դրամ: | Վերապատրաստ-ման կուրսերի իրականացման նպատակով պետական աջակցության գործիք ներդնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Տարեկան մոտ 60 վերապատրաստ-ված մասնագետի առկայություն |
| 3) | Տեխնոլոգիական վերազինման խթանման գործիքի ներդրում, մասնավորապես՝ տեխնոլո-գիաների և սարքավորումների ձեռքբերման համաֆինանսա-վորում | Աշխատանքի արտադրողակա-նության բարձրացում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2024-2027 թթ. կիրարկում | ՀՀ պետ. բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ, մասնավոր հատված: Պետական ֆինանսավորում տարեկան մինչև 100 մլն ՀՀ դրամ: | Պետական աջակցության գործիք ներդնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերի ներկայացում ՀՀ | Տարեկան առնվազն մոտ 1 մլրդ դրամի ժամանակակից սարքավորման ներդրում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչապետի աշխատակազմ | |
| **3. Ներքին շուկայում տեղական արտադրանքի ավելացում** | | | | | | | |
| 1) | Դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում ԵԱՏՄ գրանցումների փորձաքննությունների վճարների սուբսիդավորում 50% | Գրանցման ծախսերի նվազեցում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | Գործիքի ներդրում 2023 թ. 4-րդ եռամսյակ, 2024-2027 թթ. կիրարկում | ՀՀ պետ. բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ: Պետական ֆինանսավորում տարեկան մինչև 60 մլն ՀՀ դրամ: | Պետական աջակցության գործիք ներդնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Տեղական ընկերությունները ԵԱՏՄ ընթացակարգով տարեկան կգրանցեն մոտ 45-50 անուն դեղ: |
| 2) | Ռազմավարական նշանակություն ունեցող դեղորայքի գրանցման փորձաքննության վճարների սուբսիդավորում 50% | Գրանցման ծախսերի նվազեցում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | Գործիքի ներդրում 2023 թ. 4-րդ եռամսյակ, 2024-2027 թթ. կիրարկում | ՀՀ պետ. բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ: Պետական ֆինանսավորումը ներառված է սույն հավելվածի 3-րդ բաժնի 1-ին և 3-րդ մասերի ֆինանսավորման գումարի մեջ: | Միջոցառման արդյունքը ներառված է սույն հավելվածի 3-րդ բաժնի 1-ին և 3-րդ մասերում: | ԵԱՏՄ ընթացակարգով տարեկան կգրանցվեն մոտ 45-50 անուն դեղ, ՀՀ-ում կիրառվող մոտ 60 անուն դեղ, դրանց շարքում կլինեն դեղեր, որոնք կհանդիսանան նաև ռազմավարական նշանակության: |
| 3) | Միայն Հայաստանում կիրառման ենթակա դեղամիջոցների գրանցման փորձաքննության վճարների սուբսիդավորում 50% | Գրանցման ծախսերի նվազեցում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | Գործիքի ներդրում 2023 թ. 4-րդ եռամսյակ, 2024-2027 թթ. կիրարկում | ՀՀ պետ. բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ: Պետական ֆինանսավորում տարեկան մինչև 35 մլն ՀՀ դրամ: | Պետական աջակցության գործիք ներդնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերի ներկայացում ՀՀ | Տեղական ընկերությունները տարեկան կգրանցեն ՀՀ-ում կիրառվող մոտ 60 անուն դեղ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչապետի աշխատակազմ | |
| **4. Ոլորտի ճանաչելիության մակարդակի բարձրացում** | | | | | | | |
| 1) | Ֆորումներին, ցուցահան-դեսներին ընկերությունների մասնակցության ծախսերի 50%-ի համաֆինանսավորում | Դեղագործական արտադրանքի առաջմղում արտաքին շուկաներում: Տարեկան առնվազն չորս ցուցահանդեսի մասնակցության ապահովում: | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | Գործիքի ներդրում 2023 թ. 4-րդ եռամսյակ, 2024-2027 թթ. կիրարկում | ՀՀ պետ. բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ: Պետական ֆինանսավորում տարեկան մինչև 25 մլն ՀՀ դրամ: | Պետական աջակցության գործիք ներդնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Տարեկան 2 ֆորումի կամ ցուցահանդեսի մասնակցություն |
| 2) | Տեղական արտադրության դեղերի ներկայացման հեռուստահաղորդաշարի պատրաստում և հեռարձակման ապահովում | Հայաստանի բնակչության մոտ տեղական արտադրության դեղերի մասին իրազեկվածության բարձրացում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2024-2027 թթ. | ՀՀ պետ. բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ: Ֆինանսավորում տարեկան մինչև 10 մլն ՀՀ դրամ: | Հաղորդաշարի պատրաստում և ամիսն առնվազն մեկ անգամ հեռարձակում | Ընկերությունների մասին պատմող մոտ 8 ճանաչողական հաղորդաշարի հեռարձակում |
| **5. Արտահանման շուկայի ընդլայնում և դիվերսիֆիկացում** | | | | | | | |
| 1) | Արտերկրում հայկական արտադրության դեղերի գրանցման ծախսերի 50%-ի համաֆինանսավորում | Գրանցման ծախսերի նվազեցում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | Գործիքի ներդրում 2023 թ. 4-րդ եռամսյակ, 2024-2027 թթ. կիրարկում | ՀՀ պետ. բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ: Պետական ֆինանսավորում տարեկան մինչև 25 մլն ՀՀ դրամ: | Պետական աջակցության գործիք ներդնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Արտահանման ենթակա (ԵԱՏՄ շուկայից զատ) 10-20 անուն դեղ՝ կախված արտահանվող երկրում գրանցման արժեքից |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **6. Տեղական հումքային բազայի ստեղծում** | | | | | | | |
| 1) | Դեղերի արտադրության համար տեղական հումքի արտադրու-թյան կազմակերպման համար ներդրումներ իրականացնող կազմակերպություններին աջակցության տրամադրման գործիքի մշակում և ներդրում | Տեղական արժեշղթայի երկարացում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2024 թ. | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: | Պետական աջակցության գործիք ներդնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Աջակցության գործիքի ներդրում |
| **7. Միջազգային համագործակցության ընդլայնում** | | | | | | | |
| 1) | ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի Դեղագործական տեսչության համագործակցու-թյան սխեմային (PIC/S) անդամակցության ապահովում | Միջազգային համագործակցության ընդլայնում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2024-2027 թթ. | ՀՀ պետ. բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ 5 մլն ՀՀ դրամ | Ոլորտի զարգացման խթանում, միջազգային շուկայում վարկանիշի բարձրացում | ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի Դեղագործական տեսչության համագործակցու-թյան սխեմային (PIC/S) անդամակցություն |
| **8. ՀՀ-ում կլինիկական և կենսահամարժեքության հետազոտությունների իրականացման համաֆինանսավորում** | | | | | | | |
| 1) | Կլինիկական հետազոտություն-ների իրականացման 50%-ի համաֆինանսավորում | Նոր դեղերի ներդրման ծախսերի նվազեցում և արտադրության | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | Գործիքի ներդրում 2023 թ. 4-րդ եռամսյակ, | ՀՀ պետ. բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ, մասնավոր հատված: | Պետական աջակցության գործիք ներդնելու մասին ՀՀ | 2 կլինիկական հետազոտության իրականացում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | խթանում: Տարեկան առնվազն երկու հետազոտության իրականացում: | | 2024-2027 թթ. կիրարկում | Պետական ֆինանսավորում տարեկան մինչև 50 մլն ՀՀ դրամ: | կառավարության որոշման նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | |
| 2) | Կենսահամարժեքության հետազոտությունների իրականացման 50%-ի համաֆինանսավորում | Վերարտադրված դեղերի արտադրության ծախսերի նվազեցում, արտադրատեսա-կանու ընդլայնում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | Գործիքի ներդրում 2023 թ. 4-րդ եռամսյակ. 2024-2027 թթ. կիրարկում | ՀՀ պետ. բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ, մասնավոր հատված: Պետական ֆինանսավորում տարեկան մինչև 150 մլն ՀՀ դրամ: | Պետական աջակցության գործիք ներդնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Տարեկան 5 կենսահամարժե-քության հետազոտության իրականացում |
| **9. Աջակցություն դեղագործության ոլորտի ենթակառուցվածքների ստեղծմանը** | | | | | | | |
| 1) | Նախակլինիկական հետազոտությունների կլաստերի/կենտրոնի ստեղծում | Գիտական հետազոտությունների և տեղական արտադրության խթանում, որակյալ աշխատուժի առկայություն, միջազգային համագործակցության ընդլայնում: Նոր դեղերի ներդրման ծախսերի նվազեցում և արտադրության խթանում: | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2024-2027 թթ. | ՀՀ պետ. բյուջե ֆինանսավորում 600 մլն ՀՀ դրամ: | Կենտրոնի առկայություն | Նախակլինիկական հետազոտություն-ների կլաստերի/կենտ-րոնի առկայություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տարեկան առնվազն հինգ հետազոտության իրականացում: | | | | | |
| 2) | Բիոտեխնոլոգիական կենտրոնի ստեղծում | Գիտական հետազոտությունների և տեղական արտադրության խթանում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2024 թ. կենտրոնի ստեղծման ծրագրի մշակում 2025-2027 թթ. իրագործում | ՀՀ պետական գույքի տրամադրում, պետական ֆինանսավորումը կարտացոլվի բիոտեխնոլոգիական կենտրոնի ստեղծման ծրագրում: | ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած ծրագրի առկայություն և իրագործում | Բիոտեխնոլոգիա-կան կենտրոնի առկայություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ